205

ԱԶԳԱՐԱՐ

ՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Ս. ԳՐԱՑԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՑԱՑԱՑՈՂ

ԹԵՀՐԱՆ – 1947 – ՅՈՒՆԻՍ

Համար 2

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ «ՍՔԱՆՉԵԼԻ, ԽՈՐՀՐԴԱԿԱՆ, ՀԶՈՐ ԱՍՏԻՈՆ, ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՐ, ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆ».

ԵՍ. Թ. 6.

«Խաղաղութիւն եմ թողնում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ, ոչ թէ ինչպէս աշխարհն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չխռովի եւ չվախենայ»:

Յով. ԺԴ. 27.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Ազգարար Ճշմարտութեան»-ի առաջին համարը, որ լոյս տեսաւ Մարտ ամսին, Թուրքիկ հայեացք գցելով ընդհանուր աշխարհի, մանաւանդ հոգեւոր վիճակի վրայ՝ նպատակ ունէր բացառապէս ուշադրութիւն հրաւիրելու Ս. Գրքի իբրև Աստուծոյ խօսքի նիւթի վրայ,—նրա այս վերջին տագնապալից օրերում ընդհանուր մարդկութեանն ուղղած կոչին, և նրա ուսումնասիրութեան կարեւորութիւնը շեշտելու.

Ներկայ երկրորդ համարը (Յունիս) նուիր[illegible] էական և կար[illegible] կանիշի՝ մարգարէ[illegible] սուՄասիրութեան [illegible] տութեանը։ Աշխ[illegible] է իր գիշերային [illegible] թէ ընդունենք [illegible] հայեացք[illegible] բաղ[illegible]

լոյս իմ ճանապարհի համար» (Սաղմ. ՃԺԹ. 105), պիտի ընդունենք նաև, որ մարգարէութիւնն էլ նրա լուսարձակն է, «Որ լոյս է տալիս մութ տեղը, մինչև որ ցերեկը լուսանայ և լուսաբերը ծագի ձեր սրտերումը» (Բ. Պետր. Ա. 19)։

1947-ի ընթացքում լոյս կը տեսնեն երկու ուրիշ համարներ (Սեպտ. և Դեկտ.), որոնք նուիրուած պիտի լինեն, ամէն մէկը, առանձին նիւթերի,—Ս. Գրքի մէջ գտնուող ամենաերկարաթիւ, Քրիստոսի Գալստեան և նրա հետ յարակից նշանների և այլ բազմաթիւ այժմէութիւն ունեցող խնդիրների, որոնց տեղեկութիւնը կենսական անհրաժեշտութիւն պիտի լինի ոչ միայն քրիստոնեաների, այլև առհասարակ ամէն մի անհատի՝ անգամ հեթանոսների համար, որովհետև նրանք խօսում են մեր ապրած օրերի մասին և աշխարհի մօտիկ ապագայի պատմութեան ընթացքն են մատնացոյց անում։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ — Ի՞ՆՉ Է ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ցարաճուն սկեպտիկուութեան և անհաւատութեան այս դարաշրջանում, երբ անձնաւորեալ Աստուծոյ գոյութիւնն իսկ շատ անգամ թէական է շատերի համար, մարդուս միտքն զբաղեցնող բազում խնդիրներից մէկն ու կարևորագոյնն այն է, թէ ինչ է լինելու վաղը, միւս օրը, ապագայ տարիներում և ընդհանրապէս ներկայ կեանքի ուղին։ Ուր է յանգելու Արդեօք երկինքն այսօր հաղորդակցում է մարդկանց հետ ինչպէս անցեալ դարերում։ Արդեօք, եթէ Աստուած գոյութիւն ունի, տուել է մարդկային ընտանիքին իր կամքի յայտնութիւնը։ Սրանք հարցեր են, որոնք ամէն մի անհատ, տգէտ կամ դիտուն, իր կեանքի գիտակցական շրջանից ուղղում է [illegible] իրեն, իրանից աւելի [illegible] և իմաստուն մարդ[illegible] է շոշափում, [illegible] մէջ փնտրում, բայց չի կա[illegible]կանգ առնել որոշ[illegible]այ և առաւել[illegible]ում դառնում է [illegible]ում է անդեկ[illegible]ունքնե[illegible] էլ ի[illegible]

[illegible] առաջ։

Եթէ մարդկային իմացականութիւնը չի կարողացել այդ առեղծուածը լուծել և Ս. Գիրքն էլ իբրև Աստուծոյ խօսք հաւասարապէս անզօր լինի այդ և նման հարցումներին բաւարար և վախճանական պատասխան տալու, ապա ուրեմն նա չի կարող ճանաչուել իբրև ներշնչուած երկնային զօրութիւն, կամ ինչ փաստով կարող է նա պատորոշուել մարդկային գրականութիւնից։ Սակայն յուսադրիչ և միաժամանակ խիստ քաջալերական երևոյթն այն է, որ տիեզերքի և մարդկային ցեղի Արարիչն Իր ձեռքի գործին՝ մարդուն չի թողել անորոշ ու տարտամ վիճակում։

Աստուած կայ։ Աստուած խօսել ու խօսում է մարդկային ցեղի հետ,—նախ մարգարէների, ապա Իր Որդու միջոցով և հիմա էլ «Իր զօրութեան խօսքովը»՝ Ս. Գրքովը (Եբր. Ա. 1—3)։ Իսկ սկեպտիկութիւնը, եթէ ուղղակի չի ուրանում Աստուծոյ գոյութիւնը՝ ժխտում է Նրա ստեղծագործիչ զօրութիւնը, համարելով Նրան անխօս, արարածներով բնաւին չհետաքրքրուող, մեկուսացած Աստուած, որպիսի մտայնութիւնը, հարկաւ, հաւասար է սքօղուած անհաւատութեան և որով ողողուած է աշխարհը։

Մարդս իր անմեղութեան վիճակում խօսում էր իր Արարչի հետ երես առ երես, առանց ընդմիջող սև քօղի, որը ներս մտաւ այն ժամանակ, երբ նա մեղանչեց իր ստեղծողի դէմ ու հաղորդակցութեան այդ միջոցը խզուեց։ Այնուհետև «աշխարհի սկզբից մորթուած գառան» միջոցով կազմուած փրկութեան ծրագիրը հաղորդուեց մարդկային ընտանիքին մարգարէների միջոցով, որովհետև «Սուրբ Հոգուցը շարժուած խօսեցան Աստուծոյ մարդիկը (անգլ.՝ Սուրբ մարդիկը) (Բ. Պետ. Ա. 21)։

Երբ մօտենում ենք Աստուծոյ խօսքի մէջ յիշատակուած հոգևոր պարգևների նիւթին (Ա. Կոր. ԺԲ. 4—11), և յատկապէս նրա այն մասին, որ խօսում է մարգարէութեան վերաբերմամբ՝ մենք այդպիսով մօտենում ենք յայտնաբերուած կրօնի սրտին։ «Եւ մարգարէական աւելի հաստատ խօսքն ունենք, որ եթէ նրան մտիկ անէք, լաւ կանէք, ինչպէս մի ճրագի, որ լոյս է տալիս մութ տեղը...»

(Բ. Պետ. Ա. 19)։ Մարդուս բնութիւնը խորամանկ և յուսահատորէն չար ու անճանաչելի լինելով (Երեմ. ԺԷ. 9) պէտք է գոյութիւն ունենար մի վստահելի և անվրէպ միջոց, որով Արարիչը կարողանար Իր կամքը հաղորդել ընկած ցեղին. մի միջոց, որով Տէրը կարողանար ոչ միայն հրահանգիչ պարգևներ տալ, այլև կարողանար կշտամբել, յանդիմանել ու խրատել նրանց, որոնց հետ խօսում էր։

Այսպէս, բացի բնութեան մէջ յայտնագործուածից՝ մեղանչական մարդը կարող է ճանաչել Աստծուն միայն մեզ յայտնուած հոգևոր պարգևների միջոցով, որոնցից մեծագոյնն է մարգարէութեան պարգևը։ Ասում է առաքեալը. «Սէրին հետևեցէք և հոգևոր պարգևներին նախանձաւոր եղէք, և մանաւանդ, որ մարգարէանաք» (Ա. Կոր. ԺԴ. 1)։ Սրա պատճառը տրուած է 3-րդ համարի մէջ. «Իսկ մարգարէացողը մարդկանց հետ շինութիւն և մխիթարութիւն և սփոփութիւն է խօսում»։ Շինութիւն նշանակում է հոգևորապէս կառուցանել, իսկ մարգարէութիւնն աստուածընտիր միջոցն է ընկած ցեղին տալու երկնատու խօսքի կենսատու կորով։

Արդարև Ս. Գրքի մի շարք ստորոգելիներից ամենաէականը նրա մարգարէական յատկանիշն է։ Մի յատկանիշ, որով նա կտրականապէս զատորոշուում է աշխարհի բոլոր միւս տեսակի գրքերից և որով միմիայն ստանում է Աստուածային գրքի հանգամանք։ Պատմութիւնը կամ պատմագրութիւնը, որ երբեմն կոչուում է չկատարուած մարգարէութիւն, նոյնպէս Ս. Գրքի կարևոր յատկանիշներից է, որ թէև ոչ մի կերպ չի կարող մարգարէութեան տեղը դրաւել կամ նրա հետ մրցել, սակայն գալիս է իր հերթին հաստատելու և վաւերացնելու մարգարէութեան առաջ բերած փաստերը։

Ս. Գրքի մէջ գործածուած «Մարգարէ» արտայայտութիւնը լայն և ընդարձակ իմաստ է պարունակում։ Դա գործածուած է ցոյց տալու մարդիկ և կանայք, որոնք ըղբաղուած են Աստուծոյ գործի ընդարձակ ծառայութեան սահմաններում։ Նրանցից ոմանք ոչ մի մարգարէութիւն չարտասանեցին՝ ինչպէս այդ արտայայտութիւնն ընդհանրապէս հասկացուում է Ս. Գրքերի մէջ։ Ոմանք միմիայն յատուկ դէպքերում էին գործածուում, ոմանք էլ երկար տարիների ընթացքում։ Ոմանք գրի էին առնում Աստուծոյ տուած պատգամները, մինչ ուրիշները՝ միայն բանաւոր խօսքը էին տալիս։ Ոմանց, ինչպէս Դանիէլին և ուրիշների, տրուում էին հեռաւոր ապագային հասնող մարգարէութիւններ, որոնցից մի քանիսը դեռ կատարուած չեն։ Ոմանց էլ տրուում էին պատգամներ միմիայն տեղական պայմանների որոշ ժամանակին կամ դէպքին համապատասխան։ Ոմանք Աստուծոյ պատգամաւորներն էին մեծ ճգնաժամերում կանչուած նախազգուշացնելու եկեղեցուն և աշխարհին սպառնացող դատաստանների դէմ, և մարդկութեանը յետ կոչելու դէպի հաւատարմութիւն առ Աստուած։ Սրանցից էին՝ Սամուէլը, Ծդիան, Յովհաննէս Մկրտիչը և ուրիշները։ Յովհաննէսը հրաժարուեց մարգարէ կոչումից՝ ընդունելով աւելի իբրև Աստուծոյ ձայն կամ պատգամաւոր լինելու հանգամանքը, որ ուղարկուած էր Տիրոջ ճանապարհը պատրաստելու՝ Իսրայէլին կոչելով դէպի ապաշխարութիւն, բայց իբրև Աստուծոյ պատգամաւոր Քրիստոս նրան կոչեց մարգարէ և «մարգարէից էլ աւելին» (Ղուկ. Է. 26)։

«Բարձրագոյն իմաստով մարգարէ նա էր, որ չխօսում էր ուղղակի ներշնչմամբ՝ հաղորդելով ժողովրդին Աստուծոյ ստացած պատգամները։ Բայց այդ անունը տրուում էր նաև նրանց, որոնք թէև ուղղակի ներշնչուած չէին, այլ աստուածային կոչում ունէին ժողովրդին հրահանգելու Աստուծոյ գործերի և ճանապարհների մէջ»։

Մարգարէութիւնն եկեղեցու համար նոյնն է՝ ինչ որ աչքերը նորմալ մարդու ֆիզիքական կեանքի համար։ Գրքեթէ շուրջ քսան տեղերում Հին Կտակարանի մէջ մարգարէն կոչւում է տեսանող՝ այսինքն մէկը, որ տեսնում է։ Այդ բառն այսպէս է բացատրւում բառարաններում. «Մէկը որ նախատեսնում կամ նախապատմում է դէպքեր. մարգարէ» (Սա. Մալխասեանն իր բացատրական բառարանում այսպէս է բացատրում։ «Պագան կամ անտեսանելի բանը տեսնող, գուշակող, հրմայող. մարգարէ»)։ Եւ ինչպէս երևում է որոշ թւով հաւարներից այս պարգևի կարիքը կը զգացւի եկեղեցում, այլ պարգևների հետ միասին մինչև ժամանակի վախճանը։

Ս. Գրքի մարգարէութիւնները տրւել են երկու պատճառներով։ Նախ՝ դա ուղեցոյց է նրանց, որոնք ընդունում են դրան. «Խորագէտը տեսնում է չարիքը և իրեն պահում, բայց պարզամիտները (կամ կամակորները) անց են կենում և վնասւում» (Առակ. ԻԷ. 12)։ Երկրորդ՝ դա հաւատքի օգնական կամ հիմք է։ Փրկիչն ասաց իր աշակերտներին. «Եւ հիմա ասացի ձեզ՝ լինելուց առաջ, որ երբոր լինի հաւատաք» (Յով. ԺԴ 29)։

Հին Կտակարանի ճշմարտութեան ամենազօրեղ ապացոյցներից մէկն իր մարգարէութիւնների կատարումն է։ Նա պարունակում է բազմաթիւ դէպքերի նախագուշակութիւններ, որ բոլորովին դուրս են մարդկային իմաստութեան հասողութիւնից։ Մարգկային կորովմտութիւնը երբէք չէր կարող նախատեսնել և նախապատւել այն բազմաթիւ աչքառու դէպքերը, որ աշխարհի պատմութիւնն արձանագրում է և որոնք Աստուծոյ նախկին տեսանողների գուշակութիւնների կատարումն են։

Քրիստոս շեշտեց իր աշակերտներին մարգարէութեանց ուսումնասիրութեան կարևորութիւնը։ Ակնարկելով Դանիէլի մարգարէութեանը իրենց ժամանակի նկատմամբ, ասաց. «Ով որ կարդում է թող հասկանայ» (Մատթ. ԻԴ. 6)։ Իրյարութիւնից յետոյ մեկնում էր իր աշակերտներին «Բոլոր մարգարէներից, ինչոր գրքերի մէջ գրւած էր իր մասին» (Ղուկ. ԻԴ. 27)։ Փրկիչը խօսած էր բոլոր մարգարէների միջոցով. «Քրիստոսի Հոգին, որ նորանցում էր, առաջուց վկայելով Քրիստոսի չարչարանքները և նորանից յետոյ լինելու փառքը» (Ա. Պետ. Ա. 11)։

Գաբրիէլն էր, իր աստիճանով Աստուծոյ Որդուց յետոյ դասւող հրեշտակը, որ եկաւ Դանիէլի մօտ երկնային պատգամով։ Գաբրիէլն էր՝ «Իր հրեշտակը», որին Քրիստոս ուղարկեց ապագան յայտնելու Յովհաննէս սիրելիին, և օրհնութիւն է խոստացւած նրանց, որոնք կարդում են և լսում այդ մարգարէութեան խօսքերը և պահում նրանում գրւածքները (Յայտ. Ա. 3)։

«Որովհետև Տէր Եհովան ոչ մի բան չի անել, եթէ չը յայտնի իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարէներին» (Ամովս. Գ. 7)։ Մինչ «ծածուկ բաները մեր Եհովայ Աստուծոյ համար է, բայց յայտնւած բաները մեզ և մեր որդկանց համար յաւիտեան» (Բ. Օր. ԻԹ. 29)։

Ինչպէս Քրիստոսի առաջին Գալստեան պատգամը հռչակեց իր շնորհքի թագաւորութիւնը, նոյնպէս էլ իր երկրորդ Գալստեան պատգամը հռչակում է իր փառքի թագաւորութիւնը։ Երկրորդ պատգամը, առաջինի նման, հիմնւած է մարգարէութեանց վրայ։ Վերջին օրերի մասին հրեշտակի Դանիէլին ուղղած խօսքերը պիտի հասկացւին վերջին ժամանակում։ Այդ ժամանակ «շատերը պիտի քննեն և գիտութիւնը պիտի շատանայ» (Դան. ԺԲ. 4)։ «Ամբարիշտները պիտի ամբարշտանան և ոչ մի ամբարիշտ պիտի չը հասկանայ, բայց իմաստունները պիտի հասկանան» (Դան. ԺԲ. 10)։ Փրկիչն ինքը տւած էր իր Գալստեան նշանները. նա ասում է. «Երբ որ այս բոլոր բաները եղած տեսնէք, գիտացէք, որ Աստուծոյ արքայութիւնը մօտ է», «Զգոյշ կացէք անձներիդ, մի գուցէ ձեր սրտերը ծանրանան շատակերութիւնով և արբեցութիւնով և ապրուստի հոգսերով, և այն օրը յանկարծ հասնէ ձեզ վերայ». «Ուրեմն արթուն կացէք, և ամէն ժամանակ աղօթք արէք, որ արժանի լինէք ազատւել այն բոլոր բաներից, որ պիտի լինեն, և կանգնել մարդի Որդու առաջին» (Ղուկ. ԻԱ. 31, 34, 36)։

Մենք հասած ենք այս գրւածքներում նախասւած ժամանակին։ Վերջին ժամանակն եկած է. մարգարէների տեսիլքները բացւած են և նրանց վսեմ նախազգուշացումները ցոյց են տալիս մեզ, որ մեր Տիրոջ Գալուստը փառքով՝ շատ մօտ է։ Հրէաները սխալ մեկնեցին և չարաչար գործածեցին Աստուծոյ խօսքը, և նրանք չիմացան իրենց

այցելության ժամանակը։ Քրիստոսի և իր առաքելների ծառայության տարիները— ընտրած ժողովրդի շնորհքի վերջին թանգագին տարիները —նրանք վանեցին Տիրոջ պատգամաւորների կործանման դաւադրութեամբ։ Աշխարհային փառասիրութիւնը կլանել էր նրանց, և հոգևոր թագաւորութեան հրաւէրը ի-զուր էր եկել իրենց։ Նոյնպէս և այսօր աշխարհի թագաւորութիւնը գրաւում է մարդկանց մտածումները և նրանք ուշադրութիւն չեն դարձնում արագօրէն կատարուող մարգարէութիւններին և Աստուծոյ թագաւորութեան շուտափոյթ գալստեան նշաններին։

«Բայց դուք, եղբարք, խաւարումը չէք որ այն օրը գողի պէս ձեզ վրայ հասնէ։ Դուք ամենդ լոյսի որդիք էք և ցերեկի որդիք, գիշերինը չէք և ոչ խաւարինը»։ Մինչ մենք չգիտենք մեր Տիրոջ վերադարձի ժամը, մենք կարող ենք իմանալ նրա մօտ լինելը. «Ապա ուրեմն լինենք ուրիշների պէս, բայց արթուն և զարթուն լինենք» (Ա. Թես. Ե. 4—6)։

ԻՆՉՈՒ ՊԷՏՔ Է ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆՔ

Տարիներ առաջ Ամերիկայի Ջըրզի քաղաքի ափերից հեռու Մօրս Քասըլ անունով փարթամ նաւը աղէտալի կործանման հանդիպեց՝ իր հետ կորցնելով 130-ից աւելի անձնաւորութիւններ։ Նաւի բոլոր սենեակների պատերի աչքի զարնող տեղերում փակցրած էին սուզարգել գստիների և այլ գործիքների գործածութեան մասին հրահանգներ։ Կործանումից ազատուած մի քանի ճամբորդներ, որոնք այնուհետև ներկայացան Դաշնակցային քննական կոմիտէի առաջ բացատրելու դէպքի մասին՝ խոստովանեցին, որ իրենք նկատել էին պատերին փակցրած հրահանգները, բայց չէին կարդացել։ Հաւանականօրէն կրակով կամ սուզելով կորուածներից շատերը չպիտի հանդիպէին այդ դառն ճակատագրին, եթէ կարդացած և հետևած լինէին իրենց ապահովութեան համար ցուցադրուած հրահանգներին։

Մեր այս օրերում, երբ ծանրակշիռ խնդիրներ են ներխուժում համաշխարհային աղէտներով՝ քաղաքակրթութիւնը կլանելու, Աստուած Ս. Գրային մարգարէութիւնների միջոցով, պարզ հրահանգներով և որոշակի ուղղութիւններով տուել է նրանց նշանակութիւնն ու արդիւնքը մեր ապահով առաջնորդութեան և յաւիտենական փրկութեան համար։

Քրիստոս ասաց. «Եւ հիմա ասացի ձեզ՝ լինելուց առաջ, որ երբոր լինի, հաւատաք» (Յով. ԺԴ. 29)։ Սա յատկապէս ճշմարիտ է աշխարհի վախճանը նախապատմող մարգարէութիւնների վերաբերմամբ։

Թող ոչ ոք ինքն իրեն չը խաբէ՝ իբր թէ ոչ ոք չգիտէ Տիրոջ Գալստեան մօտիկութիւնը։ Պօղոս առաքեալն այսպէս է խրատում. «Բայց այն ժամերի և ժամանակների համար, եղբարք, պէտք չունիք գրել ձեզ։ Որովհետև դուք ինքներդ հաստատ գիտէք, թէ Տիրոջ օրը ինչպէս գիշերուայ գող՝ այնպէս կհասնէ։ Վասնզի երբոր կասեն, թէ խաղաղութիւն և ապահովութիւն է, այն ժամանակ յանկարծակի կհասնի նորանց վրայ կորուստը... Իսկ դուք, եղբարք, խաւարումը չէք, որ այն օրը գողի պէս ձեզ վրայ հասնէ։ Դուք ամենդ լոյսի որդիք էք և ցերեկի որդիք... Ապա ուրեմն չքնենք ուրիշների պէս, բայց արթուն ու զարթուն լինենք» (անգլ.՝ այլ հոկենք և աչալուրջ լինենք) (Ա. Թես. Ե. 1—6)։

Համաձայն այս համարի՝ Տիրոջ Գալուստը գիշերուայ գողի նման կը լինի նրանց համար, որոնք անտարբեր Աստուծոյ տուած խորհուրդների հանդէպ՝ իրենց կամահաճութեան մէջ ապահով զգալով ասում են. «Խաղաղութիւն և ապահովութիւն» ու կորսուում են իրենց վրայ եկող աղէտի մէջ։ Բայց նրանք, որոնք ուսումնասիրում են Աստուծոյ տուած խրատները և հետևում նրանց, մթութեան մէջ չեն նրա Գալստեան վերաբերմամբ։ Որովհետև նրանք ծանօթ են այն մարգարէութիւնների հետ, որոնք պարզում են Տիրոջ գալու ժամանակը և դրա համար կոչւում են «լոյսի որդիք»։

Ս. Գրքի մարգարէութիւններից շատերը պիտի կատարուեն վերջին օրերում և իբրև նշաններ ու նախազգուշացումներ ծառայեն նրանց, որոնք ապրում են այս սերունդի մէջ։ Ուշադրութիւն դարձրէք ժամանակի սկզբունքին հետևեալներից մի քանիսի մէջ. «Այն թագաւորների օրերումը երկնքի Աստուածը մէկ թագաւորութիւն է վեր կացնելու, որ յաւիտեանս չի աւերուիլ» (Դան. Բ. 44)։ «Ես

տեսնում էի մինչև որ աթոռներ դրուեցան... ատեանը նըստեց և գրքերը բացուեցան... Իսկ թագաւորութիւնն առնելու են Բարձրեալի սուրբերը և ժառանգելու են թագաւորութիւնը մինչև յաւիտեան և մինչև յաւիտեանս յաւիտենից» (Դան. Է. 9, 10, 18)։ «Հասկացիր, ով մարդի որդի, որ վերջի ժամանակի համար է տեսիլքը» (Դան. Ը. 17)։ «Այն ժամանակ վեր կը կենայ այն մեծ իշխան Միքայէլը... Եւ երկրի հողումը քընացողներից շատերը պիտի զարթնեն» (Դան. ԺԲ. 1, 2)։ «Եւ դու, ով Դանիէլ, փակիր այս խօսքերը և կնքիր գիրքը մինչև վերջի ժամանակը. շատերը պիտի քննեն, և գիտութիւնը պիտի շատանայ» (Դան. ԺԲ. 4)։ «Եւ երբոր այս բաները կսկսեն լինել, վեր նայեցէք և բարձրացրէք ձեր գլուխները, որ ձեր փրկութիւնը մօտ է» (Ղուկ. ԻԱ. 28)։ «Սա գիտացիր, որ յետի օրերումը չար ժամանակներ կը գան» (Բ. Տիմ. Գ. 1)։

Յայտնութեան գրքի մեծագոյն մասի կատարումն պիտի լինի վերջին օրերում։ Առաջին գլխում կարդում ենք. «Ահա նա գալիս է ամպերով. և ամէն աչք կտեսնէ նորան» (Յայտ. Ա. 7), իսկ վերջին գլխում մարգարէն աղօթում է. «Ամէն. եկ, Տէր Յիսուս» (Յայտ. ԻԲ. 20)։ Ամբողջ գրքի մէջ բազմիցս գրուած է այս յորդորը. «Ով լսելու ականջ ունի, թող լսէ»։

Այս մարգարէութիւնները մատնանշում են աշխարհի պատմութեան վերջին սերունդը, և պարզում նշանակութիւնը բոլոր այն բաների, որոնք վրդովում և շփոթեցնում են այս տանջուած և խոտորուած աշխարհը։ Այս մարգարէութիւնները մեզ են վերաբերում և այսօր պահանջում են յատուկ ուսումնասիրութիւն։ Պետրոս առաքեալը «Մեր Տէր Յիսուս Քրիստոսի գօրութեան և Գալստեան» մասին խօսելիս է, որ ասում է. «Եւ մարգարէական աւելի հաստատ խօսքըն ունենք, որ եթէ նրան մտիկ անէք, լաւ կանէք, ինչպէս մի ճրագի, որ լոյս է տալիս մութ տեղը, մինչև որ ցերեկը լուսանայ և լուսաբերը ծագի ձեր սրտերումը» (Բ. Պետ. Ա. 19)։

Լաւ է, որ ուշադրութիւն դարձնենք Ս. Գրքի մարգարէութիւններին, քանզի նրանք ցրում են աշխարհի վրայ թանձրացող խաւարը և իրենց անկեղծօրէն ուսումնասիրողներին դարձնում «լոյսի որդիք»։ Աստուծոյ ժողովուրդն այս վերջին օրերում չէ յուսալքուում աշխարհի բոլոր նեղութիւններից, որ կուտակուում է իրենց կեանքերի վերայ։ Նրանց յոյսն ու վստահութիւնն երենց Տիրոջ վրայ է։ Մարգարէութիւնից նրանք հասկանում են, որ վերջին օրերը հասել են և շուտով Քրիստոս ազատում կը բերի բոլոր իրեն հաւատացեալ սուրբերին։ Ուրեմն ինչքան կարևոր է, որ ուսումնասիրենք մեր օրայ մարգարէութիւնները, և կեանքով ու նկարագրով պատրաստուենք հանդիպելու մեր Տիրոջը։

Ովքեր որ անփոյթ են վերաբերուում մարգարէութիւնների ուսումնասիրութեանը և հանգիստ են զգում կեղծ երևոյթով ապահովութեան մէջ, աշխարհի կործանման մէջ կը խորտակուեն։ Երբ Աստուծոյ բարկութեան պատուհասները և ոչնչացնող կրակը կլանեն աշխարհը, նրանք սարսափահար եղած պիտի աղաղակեն ժայռերին ու լեռներին. «Վայր ընկէք մեզ վրայ, և ծածկեցէք մեզ աթոռի վրայ նստողի երեսից, և Գառի բարկութիւնից, որ Նորա բարկութեան մեծ օրը եկել է, և ով կարող է կանգնել» (Յայտ. Զ. 16, 17)։ Ապա բարձրաձայն լաց կը լինեն և կասեն. «Հունձքն անցաւ, ամառը վերջացաւ, բայց մենք չփրկուեցինք»։

Յիշենք Նոյնանման մի դէպք։ Քրիստոս նոր էր յաղթականօրէն մտել Երուսաղէմ։ Օդը դեռևս թնդում էր իր հետևորդների ուրախ աղաղակներով։ Չինչ երկնակամարից մտնող արեգակն իր փառ-

> Նոյնիսկ մարգարէները, որոնց շնորհուած էր Հոգու յատուկ պայծառութիւնը, լրիւ չէին ըմբռնում իրենց առանդուած յայտնութիւնների նշանակութիւնը։ Իմաստը պէտք է բացայայտուէր դարերի ընթացքում՝ ինչքան որ Աստուծոյ ժողովուրդը նրանցում պարփակուած հրահանգների կարիքն զգար։
>
> Տեսէք թէ Աստուծոյ այդ սուրբ մարդիկն ինչպէս էին փութաջան կերպով որոնում եւ քննում դեռ չը ծնուած սերունդների վերաբերմամբ իրենց տրուած յայտնութիւնները։ Հակադրեցէք նրանց սուրբ եռանդն այն անփոյթ ու անտարբեր վերաբերմունքին, որ հետագայ աւելի նպաստաւոր պայմանների մէջ գտնուող սերունդը ցոյց է տուել երկնքի այս պարգևի հանդէպ։ Ինչ նախատինք այն դիւրասէր եւ աշխարհասէր անտարբերութեանը, որ բաւարարուում է ասելով, թէ մարգարէութիւնները չի կարելի հասկանալ։
>
> «Մեծ բանավէճը», էջ 414.

քը՝ էր ցոլացնում Տաճարի և ամբողջ քաղաքի վրայ։ Այնքան գեղեցիկ էին օրն ու տեսարանը, որ ամէն մի հրեայի սիրտ հպարտութեամբ և գոհունակութեամբ պիտի լցէր։ Հրեաները ոչնչից չէին վախենում, ուստի այնպէս էին մտածում և յոյս ունէին, իբր թէ Երուսաղէմի փառքն աճելով պիտի շարունակի յաջորդ սերունդների մէջ։ Բայց Քրիստոս նայելով քաղաքին ցլացաւ նորա վերայ և ասեց. «Եթէ դու էլ իմանայիր՝ գոնեա այս օրւայ օրը քո խաղաղութեան մասին, բայց հիմա ծածկուեցաւ քո աչքերից։ Որովհետև օրեր կգան քեզ վերայ և քո թշնամիները չորս կողմովդ պատնէշ կպատեն, և կը պաշարեն քեզ և ամէն կողմից քեզ կնեղացնեն։ Եւ հիմնայատակ կանեն քեզ և քո որդիքն էլ քո միջումը. և չեն թողնել քո միջումը քար քարի վերայ. փոխանակ որ չճանաչեցիր քեզ այցելելու ժամանակը» (Ղուկ. ԺԹ. 41—44)։

Տիրոջ մարգարէութիւնները Հին Կտակարանում նախազգուշացրել էին հրեաներին Երուսաղէմի կործանման մասին, բայց նրանք անտարբեր էին այդ զգուշացումների հանդէպ և աչք էին փակում մարգարէութեանց առաջ։ Իրենց խաղաղութեանը վերաբերող բաներին նրանք ուշադիր չէին։ Իրենց կուրութեան պատճառով՝ ապահովութեան և ազատութեան ճանապարհը ծածկուել էր նրանց աչքերից։ Նրանք կարող էին տեղեկանալ Երուսաղէմի վերահաս կործանման մասին, սակայն լրացրին աստուածային զուշակութիւնը, որ ասում էր. «Հիմնայատակ կանեն քեզ և քո որդիքն էլ քո միջումը, և չեն թողնել քո միջումը քար քարի վերայ, փոխանակ որ չճանաչեցիր քեզ այցելելու ժամանակը»։ Եթէ նրանք միայն ուսումնասիրած լինէին նրանց տրուած մարգարէութիւնները և լսած լինէին Տիրոջ տուած խրատին՝ նրանք ազատուած կը լինէին այն սոսկալի թշուառութիւնից և կործանումից, որ մօտ քառասուն տարի յետոյ հասաւ նրանց, երբ հռովմէական բանակները կործանեցին նրանց գեղեցիկ քաղաքը և տասնեակ հազարաւորներ ոչնչացան կործանման մէջ։

Նոյն բանը ճշմարիտ է և նախաջրհեղեղեանների վերաբերմամբ, որովհետև զուցէ նրանց խնայէր, եթէ լսած լինէին Նոյի մարգարէութիւններին, որն երբ սկսեց քարոզել՝ ազդարարեց թէ Տէրը պիտի կործանէր աշխարհը ջրհեղեղով։

Սոդոմի բնակիչներն ևս իրենց խուլ էին ձևացնում այդ քաղաքի վերահաս կործանման առթիւ արած նախազգուշացումին։

Քրիստոս համեմատում է Նոյի և Ղովտի ժամանակներն Իր երկրորդ Գալստեան ժամանակի հետ։ Մատթէոսի ԻԴ. 37—39-ում մենք կարդում ենք. «Եւ ինչպէս Նոյի օրերն, այնպէս կլինի և մարդի Որդու գալուստը։ Որովհետև ինչպէս որ էին ջրհեղեղից առաջ եղած օրերը, ուտում էին և խմում էին, կին էին առնում և մարդի էին դնում, մինչև այն օր, որ Նոյը մտաւ տապանը։ Եւ չգիտացին, մինչև որ ջրհեղեղն եկաւ և ամենքը վեր առաւ, այնպէս կլինի և մարդի Որդու Գալուստը»։ Իսկ Ղուկասու ԺԷ. 28—30-ում Քրիստոս ասում է. «Նմանապէս էլ ինչպէս Ղովտի օրերումն եղաւ։ ուտում էին, խմում էին, առնում էին, ծախում էին, տնկում էին, շինում էին։ Եւ այն օրն որ Ղովտը Սոդոմիցը դուրս եկաւ, կրակ և ծծումբ տեղաց երկնքիցը և ամենքին կորցրեց։ Նոյն կերպովն էլ կլինի այն օրումը, որ մարդի Որդին կյայտնուի»։

Այդ նախկին երկու սերունդների մէջ՝ Տիրոջ նախազգուշացումն իրենց առաջ՝ նախաջրհեղեղեան ժողովուրդը և Սոդոմի բնակիչներն ամէն բանի ժամանակ ունէին, բացի իրենց փրկութեան համար ողորմածաբար տրուած մարգարէութիւնների համար։

Այդպէս է նաև այսօր։ Մինչ Ս. Գրային մարգարէութիւնների լոյսը կենտրոնացած է այս սերունդի վրայ՝ աշխարհն ամէն բանի ժամանակ ունի, բացի Աստուծոյ և այս ժամանակւան վերաբերող մարգարէական յատուկ պատգամի համար։ Աշխարհը կուրաբար առաջ է գնում, տեսնում է իր հիմքերը լքպրծուն են, անգէտ է դրանց նշանակութեան մասին և դարման է փնտռում ինքն իր մէջ։ Այս վերջին տարիների նեղութիւններն ու աղէտները պարզաբանել են, որ աշխարհը չի կարող երջանկութեան և բաւարարութեան որոշ երաշխիք առաջարկել։ Բազմութիւններ կան ամբողջովին անյոյս վիճակում։ Այսպիսի ժողովուրդների և նման ժամանակների համար Ս. Գրքի մարգարէութիւնները բերում են փառաւոր յոյս—բոլոր նեղութիւնների ու աղէտների, տխրութիւնների ու յուսախաբութիւնների, մեղքի ու տանջանքի վախճանը—մեր

Տիրոջ շուտով Գալստեամբը։

Այս անգին յոյսը կարելի է ձեռք բերել մարգարէութիւնների ուսումնասիրութեամբ։ Անփոյթ կամ անտարբեր կերպով տգէտ լինել՝ նշանակում է մարդ իր դատավճիռը կնքել։ Բայց ազատում և փրկութիւն պիտի լինի փորձառութիւնը նրանց, ովքեր որ ուսումնասիրում և հնազանդում են Տիրոջ խրատին։ Յովհաննէս յայտնիչն ասում է. «Երանելի են այս մարգարէութեան խօսքերը կարդացողը և լսողները, և սրանում գրածները պահողները, որովհետև ժամանակը մօտեցել է» (Յայտ. Ա. 3)։

Թարգմ. անգլ. Յ. Գր.

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԽՕՍՔԸ ՄԵՐ ՕՐԵՐԻ ԱՆՑՔԵՐԻ ՎՐԱՅ ԹԱՓԻԱԾ ԼՈՅՍ

Դարերի ընթացքում կատարուած մարգարէութիւնները հաստատուն և ստոյգ կերպով վկայում են, որ կենդանի Աստուծոյ ձայնը խօսում է մեզ հետ Ս. Գրքերի միջոցով։ Վերջաւորութիւնն սկզբից նախապատմելու զօրութիւնն աստուածութեան նշան է։ Հնուց Տէրն այս մրցակոչն է ուղղել. «Թող առաջ գան և մեզ իմացնեն, թէ ինչ պիտի պատահի։ Իմացրէք ետևից եկող բաները, և մենք էլ կիմանանք, թէ աստուած էք դուք» (Ես. ԽԱ. 22, 23)։

Սակայն ամբողջ աշխարհը լուռ է մնացել, որովհետև նախապատմելն Աստուծոյ գործն է և Ս. Գրքում Նա ցոյց է տուել դա։ Ոչ-քրիստոնեայ կրօնների սուրբ գրքերը ոչ մի բան չգիտեն հին մարգարէութիւնների մասին՝ որ կարողանան նախագուշակել թագաւորութիւնների ծագման և անկման, և դարերի ընթացքում տեղի ունեցած պատմութեան անցքերի մասին։ Դրա պատճառն այն է, որ այս գրքերը գրել են մարդկանց կողմից, իսկ Ս. Գիրքը տուել է Աստուծոյ ներշնչմամբ։

Բոլոր դարերի ընթացքում երկնային մի ձայն խօսել և փաստել է մարդկանց հետ կենդանի Խօսքի միջոցով, «Ես եմ Աստուած», յայտնում է Նա, «և ուրիշը չկայ Աստուած, և ինձ պէս մի Ջոկը չկայ, որ պատմում եմ առաջուց վերջինը և վաղուց այն՝ որ չէ եղած» (Ես. ԽՁ. 9, 10)։

ԵԿՈՂ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆԱԽԱՍԻԱՆ

Մարգարէութեան մեծ նախագծումները կրկին ու կրկին պատմել են պատմութեան ընթացքը նախնագոյն ժամանակներից մինչև վերջ՝ պատմելով այն բաների մասին, որ մինչև հիմա «դեռ չեն եղած», բայց հաստատապէս պիտի կատարուեն։ Այս պատգամները, որոնք դարեր առաջ են գրի առնուել, խօսում են մեր իսկ օրերի հետ։ «Հաստատուն խօսքի» լոյսով մենք տեսնում ենք, որ եկող դէպքերի ծրագիրն արագօրէն առաջնորդում է դէպի մարդկային պատմութեան գագաթնակէտը — Քրիստոսի երկրորդ Գալուստը, զօրութեամբ և փառքով՝ հաստատելու Իր յաւիտենական թագաւորութիւնը։ Ամէն մի մարգարէական ուրուագիծ մատնանշում է այս ի կատար ածող դէպքը՝ հրատարակելով, որ այդ մեծ օրը մեր առջևն է գտնուում։ Ուշադրութիւն դարձրէք Ս. Գրքի հետևեալ առաջնորդող գծերին, որոնցից իւրաքանչիւրն առանց սխալուելու մատնանշում է աշխարհի մեծագոյն դէպքը՝ մեր Տիրոջ երկրորդ Գալուստը։

ԴԱՆԻԷԼԻ Բ. ԳԼԽԻ ՄԱՐԳԱՐԷԱՒԹԻՒՆԸ

Երկու հազար հինգ հարիւր տարի առաջ Բաբելոնում խօսուած մի քանի բառերի սահմանում ինքնակալութեան ճշգրիտ ընթացքն է նախագծուած մինչև մեր օրերը։ Աստուած տուել էր Նաբուգոդոնոսոր թագաւորին մեծ արձանի երազը՝ իր ոսկէ գլխով, արծաթէ կրծքով, կողքերը՝ պղնձից, սրունքները՝ երկաթից, իսկ ոտքերը՝ կաւախառն երկաթից։ Դանիէլ մարգարէն տուեց մեկնութիւնը և պատմութիւնն էլ պատասխանում է մարգարէութեան։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.— Մարգարէն ասաց թէ՝ Ոսկեայ գլուխը Բաբելոնն է, և ոսկին էլ պատշաճապէս ներկայացնում է Բաբելոնի շքեղութիւնը, «թագաւորութիւնների փառքը»։ Նրանից յետոյ գալու էր «մի աւելի ցած թագաւորութիւն»։ Մարաց Պարսկաստանը յաջորդեց Բաբելոնին, որ տարածութեամբ աւելի մեծ էր, իսկ պայծառութեամբ աւելի ցածր։ Այնուհետև մարգարէն ասաց թէ՝ գալու էր մի «երրորդ թագաւորութիւն պղնձից», որ «կտիրէ բոլոր երկրին»։ Համապատասխան այդ

մարգարէութեան Ցունաստանը եկաւ իր «պղնձազգեստ» մարտիկներով տիրելու «բոլոր երկրին»։ Նրան պիտի հետևէր չորրորդ մեծ կայսրութիւնը «երկաթի նման պինդ» նուաճելու և ջարդելու բոլոր միւս ազգերին։ Այս մարգարէութիւնը ճշտիւ նկարագրում է «Հռովմի երկաթէ մի-ապետութիւնը», որ յաջորդեց Ցունաստանին և նուաճեց աշխարհին։ Բայց հետագայում այս հզօր թագաւորութիւնը պիտի բաժանուէր՝ ինչպէս ներկայացուած է կաւախառն երկաթեայ ոտքերով։ «Դա մի բաժանուած թագաւորութիւն է լինելու։ Եւ ճիշտ այդպէս արևմուտքի հռովմէական կայսրութիւնը բաժանուեց արևմտեան Եւրոպայի թագաւորութիւնների վրայ։ Հին Հռովմի այս հողամասերին տիրող ազգերը հիմա իրենց դերերն են խաղում ամենօրեայ գործերի մէջ։

Մինչև այժմ ոչ մի մարգարէութիւն չի վրիպել, և ապա ինչ։ «Այն թագաւորների օրերումը»—արևմտեան Եւրոպայի այս ազգերը, որ այսօր մեր աչքերի առջևն են—«այս թագաւորների՝ օրերումը երկնքի Աստուածը մէկ թագաւորութիւն է վեր կացնելու, որ յաւիտեան չի աւերուիլ» (Դան. Բ. 44)։

Այս թագաւորութիւնը չի գալու քաղաքականութեանց դռներովը, ոչ էլ աշխարհի դարձի գալովը, որովհետև աշխարհի միլիոններից համեմատաբար շատ քչերն են հնազանդութիւն ցոյց տալիս Աստծուն (Ղուկ. ԺԲ. 32)։ Բայց փառաց թագաւորութիւնը կը գայ, երբ Աստուած «նոր երկինք և նոր երկիր» ստեղծի. երբ «գայլը և գառը միասին կարածեն, և առիւծն արջառի պէս խոտ կուտէ» (տես Ես. ԿԵ. 17, 21—25)։ Երբ Աստուծոյ քաղաքը մարդկանց հետ կլինի. երբ «Աստուած կը ջնջէ բոլոր արտասուքը նրանց աչքերիցը. և մահն այլևս չի լինել, ոչ սուգ, ոչ աղաղակ և ոչ այլևս ցաւ կլինի» (Ցայտ. ԻԱ.)—այդ փառաւոր թագաւորութիւնը չի հաստատուել աշխարհի այժմեան դրութեան մէջ։ Դա միմիայն կարող է գալ, երբ Քրիստոս վերադառնայ երկնքի ամպերով (Ցայտ. Ա. 7) և Աստուծոյ հզօր զօրութեան ներգործութեամբը։ Այդպէս կը լինի. «երազը հաստատ է և մեկնութիւնն ստոյգ (Դան. Բ. 45)։

ԴԱՆԻԷԼԻ Է. ԳԼԽԻ ՏԵՍԻԼՔԸ

Ազգերի և ժողովուրդների փոթորկոտ ծովից չորս մեծ դաղաններ դուրս եկան՝ խորհրդանիշներ Բաբելոնի, Մարք-Պարսկաստանի, Ցունաստանի և Հռովմի։ Չորրորդ դաղանը տասն եղջիւր ունէր, որոնք հռովմէական կայսրութեան տասը թագաւորութիւնների բաժանելն էին ներկայացնում։ Այս եղջիւրները դիտելիս մարգարէն նկատեց, որ մի ուրիշ եղջիւր դուրս եկաւ նրանց միջից, «որ տարբեր է լինելու առաջիններից». դա մի եկեղեցական ոյժ էր և հրեշտակը դրա մասին ասաց.

«Եւ Բարձրեալին դէմ խօսքեր է խօսելու և Բարձրեալի սուրբերին հարստահարելու է, և խորհելու է, որ ժամանակներն ու օրէնքները փոխէ, և նորանք պիտի նորա ձեռքը տրուեն մինչև մի ժամանակ և (երկու) ժամանակներ և կէս ժամանակ» (1260 տարի) (Դան. Է. 25)։

Երբ հռովմէական կայսրութիւնը տասը թագաւորութիւնների բաժանուեց՝ նրանց միջից այնպիսի մի ոյժ վերկացաւ—Պապականութիւն,—որ դերիշխեց մարգարէական ամբողջ երկար շրջանում։ Նրա հալածիչ ոյժը բեկանուեց 1260 տարուց յետոյ, բայց դեռ ևս մնում է իբրև աւանդութիւն ու մոլորութիւն ընդդէմ Աստուծոյ ճշմարտութեան։ Սակայն ճշմարտութիւնը պիտի յաղթանակի։ Մարգարէին ցոյց տրուեց երկնքում տեղի ունեցող դատաստանի տեսարանը Հինաւուրցի աթոռի առաջ (համարներ՝ 9, 10) և մարգարէութիւնն ասում է, թէ ինչ պիտի լինի այդ դատաստանական գործի վախճանը։

«Բայց ատեանը պիտի նստէ և նորա իշխանութիւնը պիտի վեր առնեն, որ փչացնեն և կորցնեն խպաու։ Եւ թագաւորութիւնն ու իշխանութիւնը և բոլոր երկնքի տակին եղող թագաւորութիւնների մեծութիւնը պիտի տրուի Բարձրեալի սուրբերի ժողովրդին։ Նորա թագաւորութիւնը յաւիտենական թագաւորութիւն է և բոլոր իշխանութիւնները պիտի նորան ծառայեն և հնազանդեն» (համարներ՝ 26, 27)։

ԴԱՏԱՍՏԱՆԻ ԺԱՄԻՑ ՄԱՍԻՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

Դանիէլի ութերորդ գլխի տեսիլը տալիս է դատաստանական գործի բացումն երկնքում, որը մարգարէն տեսաւ՝ պատրաստուում էր վախճան դնելու մոլորութեան և հաւատուրացութեան։ Դարձեալ տեսիլքը հետեւում է Մարք-Պարսկաստանի, Ցունաստանի, Հռովմի պատմութեանը և առաջ է գնում դէպի Հռովմի եկեղեցական խոշոր ոյժի զարգացմանը՝ պապականութեա-

նը, որը «Ճշմարտութիւնը գըտեց գետինը» (համար 12)։ «Մինչև երբ», հարցուց։ Ե՞րբ պիտի սկսէր այդ դատաստանական գործը, որ պիտի տար Աստուծոյ վերջնական պատասխանը մեծ հերձուածութեանը (apostasy—հաւատուրացութիւն), և երբ պիտի մոլորութեամբ և աւանդապաշտութեամբ ոտնակոխ եղած ճշմարտութիւնները կրկին բարձրանային։ Մարգարէական 2300 տարիների երկար ժամանակաշրջանը տուեց դրա պատասխանը (մարգարէութեան մէջ -օրն առնուում է տարեայ տեղ,—տեսնել Թուոց ԺԴ. 34, Եզեկ. Դ. 6) (համարներ 13, 14)։ Այս ժամանակաշրջանի վախճանը ցոյց է տալիս դատաստանական գործի սկիզբն երկնային սրբարանում։ Հրեշտակը մարգարէական ժամանակի այս տեսիլը բացատրեց Դանիէլին (Դան. Թ. 23)։ Դա սկսեց Արտաշէսի հրամանովը՝ Երուսաղէմը վերականգնելու նախ քան Քրիստոս 457 թուին (Դան. Թ. 25)։ Դրա առաջին «եօթանասուն եօթնեակը» կամ 490 տարիները հասնում էին մինչև Մեսիայի յայտնուելն ու գործը Իր գալստեամբ, և 2300 տարիների լրիւ ժամանակաշրջանը վերջացաւ 1844-ին։

Ապա 1844-ին վերը՝ երկնային սրբարանում սկսեց այն դատաստանական գործը (Դան. Է. 9—11), որը պիտի կարձէր մեղքի և մոլորութեան իշխանութիւնը, մինչ երկրի վրայ Աստուած բարձրացնում է ճշմարտութիւնների չափանիշը, որ վաղուց ոտնահարուել է։ Յայտնութեան ԺԴ. 6–14-ի տեսիլքում այս դատաստանի ժամանակ յատուկ աւետարանական գործն ու պատգամն են նկարագրուած։ Պատգամը նախազգուշացնում է մեծ հերձուածողութեան դէմ, և կոչ է անում մարդկանց հնազանդելու և պաշտելու միայն Աստծուն—«Պահելու Աստուծոյ պատուիրանքներն և Յիսուսի հաւատքը»։ Ապա դրան հետևում է Թագաւորաց Թագաւորի գալուստը։ «Ես նայեցի և ահա մի սպիտակ ամպ և ամպի վրայ մէկը նստած մարդի Որդու նման»։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ

Դանիէլի ԺԱ. գլխի մարգարէութիւնն սկսւում է Մարաց Պարսկաստանով և Յունաստանով. պատկերացնում է Յունաստանի՝ Աղէքսանդրի մահից յետոյ՝ չորս թագաւորութիւնների բաժանելը (համար 4), և Փոքր Ասիան ու Սիւրիան գրաւող պետութեանը կոչում է «հիւսիսի թագաւորը»։ Այդ մարգարէութեան վերջին մասը խօսում է «յետին ժամանակաւ» և «հիւսիսի թագաւորի» ճակատագրի մասին (համարներ 40—45)։ Դարեր շարունակ, Թիւրքիան գրաւել է սկզբնական հիւսիսի թագաւորի այդ սահմանները։ Անցեալում ամէն անգամ, երբ սպառնացել են նրան ոչնչացնելու՝ մի որևէ քաղաքական կոմբինացիա (միջոց) առաջ է եկել Թիւրքիային օգնելու իր գոյութիւնը շարունակելու։ Սակայն մարգարէութիւնը «հիւսիսի թագաւորի» վերաբերմամբ փակւում է այս խօսքերով. «Եւ պիտի հասնէ իր վախճանին և նորան օգնող պիտի չլինի»։ Հիմա որոշակի երևում է, թէ ինչպէս դեղեալով նա դիմում է իր վախճանին, և այդ վերջաւորութիւնն ազդանշանն է այն «նեղութեան ժամանակի, որ եղած չէ»—հաւաքումը Արմագեդոնի պատերազմի — աշխարհի վախճանի։ Եւ դա նշանակում է, քան մարգարէութեան, մեռելների յարութիւնը և Աստուծոյ զաւակների վերջնական փրկութիւնը (Դան. ԺԲ. 1—3)։

ԵՕԹՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Քանի որ «եօթը» թիւը նշանակում է ամբողջութիւն (լրութիւն), ուստի Ասիայի սահմանների եօթն եկեղեցիներն ընտրուած են Յայտնութեան Բ. և Գ. գլուխների մէջ ներկայացնելու այն փորձառութիւնները, որոնց միջով եկեղեցին պիտի անցնէր առաքելական եկեղեցուց սկսած մինչև վերջին օրերի եկեղեցին։ Այդ մարգարէութեան վերջերում այս պատգամն է տրուում. «Ահա ես գալիս եմ շուտով» և վերջանում է այն խոստումով, թէ տեղ կտրւի Քրիստոսի աթոռի վրայ նրան, «ով որ յաղթում է»։ Եկող թագաւորութիւնն ամէն մի մարգարէութեան նիւթի վախճանն է կազմում։

ԵՕԹԸ ԿՆԻՔՆԵՐԸ

Յայտնութեան Զ. գլխի մարգարէութիւնը պատկերացնում է առաքելական եկեղեցու ելոյթը «յաղթելով և յաղթելու համար», ապա եկեղեցու մէջ մարմնի հեռացումը հաւատքից, հալածող կրօնաւորների ընթացքը խաւար դարերի միջոցում մինչև մարտիրոսների օրերն և գրքան հեռևող բարեկարգութիւնը։ Ապա մարգարէութիւնն սկսում է խօսել Քրիստոսի երկրորդ Գալստեան նշանների մասին և փակւում է երկինքը՝ գալարուող գրքի (փաթեթի) պէս տեղիքը քաշելու

մասին, երկրի շարժելու մասին և թէ ինչպէս անհաւատները ու անպատրաստները աղաղակում են ժայռերին ու սարերին, որ ծածկեն իրենց, մինչ Փրկիչը գալիս է փառքով։

ԵՕԹԸ ՓՈՂԵՐԸ

Յայտնութեան Ը. և Թ. գլուխներում քաղաքական դէպքեր են նկարագրուած։ Առաջին չորս փողերը նկարագրում են Հռովմի բաժանումը գոթերի, վանդալների, հոների և ոդոսների (odoacer) խառնուրդ ցեղերի յարձակումներից, որոնք տապալեցին արևմուտքի վերջին կայսրը։ Հինգերորդ փողի մարգարէութիւնը լուսանկարչական կարժառի նման պատկերացնում է սարասինների (saracens) ծագումը, մարախների նման խռնումը անապատից թափելու Հռովմի արևելեան կայսրութեան վրայ, որոնց հետևում են՝ ըստ վեցերորդ փողի՝ Եփրատի սահմաններից եկող Օթոման թիւրքերը՝ ոչնչացնելու արևելեան կայսրութիւնն ու Կոստանդնապօլիսը վերցնելու։ Եօթներորդ փողի հնչումով Աստուծոյ խորհուրդը՝ աւետարանական գործը պիտի վերջանայ (Յայտ. Ժ. 7), մինչ դատաստանն է նստում երկնային տաճարում (Յայտ. ԺԱ. 18, 19)։ Ապա երկնից եկող ձայները տալիս են յաղթանակի աղաղակը. «Աշխարհի թագաւորութիւնները մեր Տիրոջը և նորա Քրիստոսինը եղան, և նա կթագաւորէ յաւիտեանս յաւիտենից» (Յայտ. ԺԱ. 15)։

ՄԵԾ ԲԱՆԱՎԵՃԸ ՎԵՐՋԱՆՈՒՄ Է

Յայտնութեան ԺԲ. և ԺԳ. գլուխները ուրուագծում են սատանայի կռիւը Քրիստոսի և նրա եկեղեցու դէմ սկսած Փրկչի ծննդից՝ Հռովմէական կայսրութեան մէջ, որ շարունակւում է պապական գերիշխանութեան 1260 տարիների ամբողջ ընթացքում (Յայտ. ԺԲ. 1։)։ Ազգերի վրայի այդ գերիշխանութիւնն յետոյ բեկանուեց. բայց այդ ժամանակ պապական իշխանութեանը տուած մահի վէրքը պիտի բուժի՝ մինչ ամբողջ աշխարհը պէտք է հպատակութեան դաւանութիւն ցոյց տայ նրան (Յայտ. ԺԳ. 2—7)։

Հիմա տեսարանը փոխւում է (համար 11). նոր աշխարհում մի նոր կարգ է սկիզբ առնում։ Մի ոյժ է ծագում, որի խորհրդանիշն է գառան երկու եղջիւրներով մի գազան, որ ներկայացնում է քաղաքական և կրօնական ազատութիւնը,—եկեղեցու և պետութեան բաժանումը,—ճշմարիտ բողոքական և աւետարանական սկզբունքներ։ Բայց դարձեալ փոփոխութիւն է առաջ գալիս։ Անհաւատարիմ բողոքական սկզբունքներին՝ կրօնական կազմակերպութիւններն ի վերջոյ ճգնում են բռնադատել կրօնական օրինապահութիւնը հին ձևով—քաղաքական օրինադրութեամբ։ Այսպիսով նրանք «պատկեր» են շինում, կամ նմանւում են պապականութեանը (համարներ 12—17)։ Բայց Աստուած մի նախազգուշական պատգամ է ուղարկում այս ամէնի դէմ, և Քրիստոսի Գալուստը վախճան է դնում այդ պայքարին (Յայտ. ԺԴ. 6—14)։ Փրկուածները, նրանք որոնք յաղթում են պապականութեանը և նրա «պատկերին», կանգնում են ապակեղէն ծովի վրայ աթոռի առաջ (Յայտ. Ժե. 2)։

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՆ ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԱՍԻՆ

Պատասխանելով առաքեալների հարցին թէ՝ «Ի՞նչ կլինի Քո Գալստեան և աշխարհիս վերջին նշանը», Քրիստոս նախապատմեց Երուսաղէմի կործանումը և եկեղեցու նեղութիւնների օրերը պապական գերիշխանութեան երկար ժամանակաշրջանի մասին (Մատթ. ԻԴ. 15—22)։ «Շուտով այն նեղութեան օրերից յետոյ» (համար 29) երկնքում նշաններ պիտի երևային—արևի և լուսնի խաւարումը (Մայիս 19, 1780), աստղերի թափելը (Նոյ. 13, 1833), ապա «երկրի վրայ հեթանոսները (անգլ.՝ ազգերը) խռովութեամբ կը տագնապին» (Ղուկ. ԻԱ. 25)։ «Երբ այս բաները կսկսեն լինել», ասաց Քրիստոս, «վեր նայեցէք... որ ձեր փրկութիւնը մօտ է» (համար 28)։ «Եւ կը տեսնեն մարդի Որդին գալիս երկնքի ամպերի վերայ զօրութիւնով և շատ փառքով։ Եւ նա կուղարկէ իր հրեշտակները մեծաձայն փողով, և նորանք կժողովեն նորա ընտրեալներին չորս հողմից, երկնքի ծայրերից մինչև նորա միւս ծայրերը» (Մատթ. ԻԴ. 30, 31)։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՇԱՍԽԱՆՈՒՄ Է ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ՝ «ԱՍՏԱՒԾԱՅՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄՕՏԵՑԵԼ Է»

Մարգարէութեան ձայնը խօսել է և պատմութեան ձայնը դարերի ընթացքում պատասխանել է նրան։ Նա որ խօսում է Ս. Գրքերի միջո-

ցով՝ ոկզբից դիտէ վերջաւորութիւնը, և նա է, որ զգուշացնում է թէ՝ աշխարհի բոլոր բաների վախճանը մօտենում է։ Նա աղերսում է մարդկանց լսելու Իր ձայնին, երբ Նա փրկութեան ճանապարհի մասին է պատմում և յայտնում աւետարանական պատրաստութեան յատուկ պատգամը հանդիպելու Փրկչին, երբ Նա գայ փառքով։ Մեզ յորդորուում է ջերմեռանդ կերպով ուսումնասիրելու երկրորդ Գալստեան մասին եղած մարգարէութիւնները։

«Եւ մարգարէական աւելի հաստատ խօսքն ունենք, որ եթէ նրան մտիկ անէք, լաւ կանէք, ինչպէս մի ճրագի, որ լոյս է տալիս մութ տեղը, մինչև որ ցերեկը լուսանայ և լուսաբերը ծագի ձեր սրտերում (Բ. Պետր. Ա. 19)։

Թարգմ. անգլ.
Ց. Գ.

Ս. ԳՐՔԻՆ ՀԱՐՑԵՐ
Ս. ԳՐՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ

1. Ս. Գրքերն ինչո՞ւ են տուել։

Նորա համար ինչ որ գրուեցաւ՝ մեր սովորելու համար գրուեցաւ, որ համբերութեամբ և գրքերի մխիթարութեամբ յոյսն ունենանք (Հռ. ԺԵ. 4)։

2. Բոլոր Ս. Գրքերը ինչ միջոցով են տուած։

Ամէն գիրք (Ս. Գիրք) Աստուածաշունչ են։ (Բոլոր (ս.) գրուածքները տրուած են Աստուծոյ ներշնչմամբ) (Բ. Տիմ. Գ. 16. ա. մաս)։

3. Ինչի համար են օգտակար։

Եւ օգտակար են վարդապետութեան և յանդիմանութեան և ուղղելու և արդարութեան խրատելու համար (16. վերջին մաս)։

4. Մարգարէութիւնն ինչպե՞ս տուեց։

Որովհետև երբէք մի մարդ մարգարէութիւն չտրուեցաւ մարդկանց կամքի պէս, բայց Սուրբ Հոգուցը շարժուած խօսեցան Աստուծոյ մարդիկը (Բ. Պետր. Ա. 21)։

5. Տերն ինչ կարող է անել ապագայի մասին։

Առաջի բաները ահա կատարուել են, և նորերը ես եմ պատմում. նորանք դեռ չը բղխած՝ ձեզ իմացնում եմ (Եսայ. ԽԲ. 9)։

6. Աստուծոյ զօրութիւնն ինչման հետուն է կարող յայտնաբերել ապագայից։

Ցիշեցէք առաջիններն ի յաւիտենից, որովհետև ես եմ Աստուած և ուրիշը չկայ աստուած. և ինձ պէս մի ջոկը չը կայ. որ պատմում եմ առաջուց վերջինը և վաղուց՝ այն որ չէ եղած (Եսայ. ԽՁ. 9, 10)։

7. Աստուած ապագայի գաղտնիքներն ո՞ւմ է յայտնաբերում։

Որովհետև Տէր Եհովան ոչ մի բան չի անել, եթէ չը յայտնէ իր խորհուրդը իր ծառաներին (մարգարէներին) (Ամոս. Գ. 7)։

8. Յայտնաբերուած բաներն ո՞ւմ են վերաբերում։

Ծածուկ բաները մեր Եհովայ Աստուծոյ համար է, բայց յայտնուած բաները՝ մեզ և մեր որդկանց համար յաւիտեան, որ այս օրէնքի ամէն խօսքերը կատարենք (Բ. Օր. ԻԹ. 29)։

9. Պետրոս առաքեալն ինչ վկայութիւն է տալիս աղաղակերպութեան սարի վրայ ունեցած իր փորձառութեան մասին։

Որովհետև մենք ոչ թէ վարդապետութեամբ հնարուած առասպելների հետևելով ցոյց տուինք ձեզ մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը և Գալուստը, այլ ականատես լինելով նորա մեծափառութեանը (Բ. Պետր. Ա. 16)։

10. Նա ե՞րբ տեսաւ Քրիստոսի մեծափառութիւնը և լսեց երկնքից եկած ձայնը։

Եւ այս ձայնը մենք լսեցինք երկնքիցն եկած, երբոր Նորա հետ այն սուրբ սարումն էինք (նոյն գլխի 18 համար)։

11. Նա ինչպէս է շեշտում մարգարէութեան արժանահաւատութիւնը։

Եւ մարգարէական աւելի հաստատ խօսքն ունենք (19 հ.)։

12. Դրա համար ինչ խրատ է տալիս։

Եթէ նրան մտիկ անէք, լաւ կանէք, ինչպէս մի ճրագի, որ լոյս է տալիս մութ տեղը, մինչև որ ցերեկը լուսանայ և լուսաբերը ծագի ձեր սրտերում (19 հ. վերջին մաս)։

ԳԻՆԸ 5 ՌՈՒԱԼ

ՏՊ. «ՄՈԴԵՐՆ»

ՀԱՄԵՍ

Խիարան Փ. Հլի № 2075.

Seventh-Day Adventist Mission

ՀՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0687984

ЦЕНА
5п-9-
4129